

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄԸ

Գ. Ա. ԹԱԹՈՍՅԱՆ

Ռուս ականավոր բանաստեղծ ու գիտնական Վալերի Յակովլևիչ Բրյուսովը, որի ծննդյան 90-ամյակը առանձին սիրով նշվեց Հայաստանում, հրակայական դեր է խաղացել հայկական մշակույթի ուս հասարակության մեջ տարածելու, ուս և հայ ժողովուրդների դարավոր բարեկամությունը ամրապնդելու գործում:

Դեռևս 1915 թ. հունիսին, Մոսկվայի հայկական կոմիտեի առաջարկությամբ, Բրյուսովը ձեռնամուխ եղավ խմբագրելու և թարգմանելու հայ պոետների ստեղծագործությունները՝ հրատարակության նախատեսված «Հայաստանի պոեզիան» անթոլոգիայի համար: Այդ օրերին հայ ժողովուրդը ծանր ողբերգություն էր ապրում: Երիտասարդ թուրքերի կողմից կատարվող հայկական ջարդերը սպառնում էին Արևմտյան Հայաստանում ապրող հայերի ֆիզիկական գոյությանը: Աշխարհին անհրաժեշտ էր ցույց տալ, որ բարբարոսական բնաջնջման է ենթարկվում մի ժողովուրդ: Որ ստեղծել է գեղարվեստական անկրկնելի կոթողներ, որ համաշխարհային կուլտուրայի գանձարանն է ներդրել անգնահատելի ավանդ:

Այս իմաստով «Հայաստանի պոեզիան» գրքի հրատարակությունն ունեցավ ոչ միայն հսկայական կուլտուրական, այլև հասարակական-քաղաքական նշանակություն:

Պետք է ասել, որ ուսերեն լեզվով հայ գրականության ժողովածուների և առանձին ստեղծագործությունների հրատարակումը ձեռնարկվել էր և նախկինում: Դեռևս 1894 թ. լույս ընծայվեց «Հայ բելետրիստները, դրամատուրգները և պոետները» ժողովածուն, չորս տարի հետո՝ Յուրի Վեսելովսկու «Բանաստեղծական թարգմանությունները» (Ս. Շահադիզից, Հ. Հովհաննիսյանից, Ա. Մատուրյանից, Լերենցից), 1903 թ.՝ «Հայ ժամանակակից պոետները», մեկ տարի անց՝ «Հայ ժամանակակից գրականությունը», 1907 թ.՝ «Հայկական



չատեղյակ էր համաշխարհային գրականությանն ու պատմությանը: Եվ դա, անկասկած, օգնեց նրան լավ հասկանալ և զգալ ուրիշ ժողովուրդների պոեզիան: Իզուր չէր Մ. Գորկին նրան համարում «ամենակուլտուրական գրողը Ռուսիայում»: Վերջապես, կար ևս մի հանգամանք, որո, ըստ երևույթին, փոքր դեր չէր խաղացել այն բանում, որ Գորկին երաշխավորել էր հատկապես Բրյուսովին որպես անթուղիայի խմբագիր: Պատերազմական ժամանակի պայմանները պահանջում էին, որպեսզի հայ պոեզիայի մոնումենտալ անթուղիային հրատարակման պատրաստվեր մաքսիմալ սեղմ ժամկետում, ընդամենը կես տարվա ընթացքում: Այդպիսի խնդիրն ի վիճակի էր կատարելու միայն շատ եռանդուն և գործունյա մարդը, որը կարողանար աշխատել արագ ու բեղմնավոր: Հենց այդպիսին էր Բրյուսովը: Նրա աշխատունակությունը բացառիկ էր: Մ. Գորկին բարձր էր գնահատում Բրյուսովի այդ հատկությունը: Նրան ուղղված նամակներից մեկում Գորկին գրում էր. «Շատ եմ ցանկանում աշխատել Ձեզ հետ շատ և երկար: Եվ սա հաճոյախոսություն չէ, հավատացե՛ք. ռուս գրականության մեջ ես չգիտեմ ավելի գործունյա մարդ, քան Դուք ևք: Հիանալի աշխատող եք Դուք»:

Այսպիսով, Բրյուսովը, որպես բանաստեղծ, թարգմանիչ, գիտնական և անսպառ եռանդ ու արտակարգ աշխատասիրություն ունեցող մարդ, միանգամայն նախապատրաստված էր այն բանին, որպեսզի կարճ ժամկետում իրագործեր իրեն առաջարկված լուրջ խնդիրը: Ընդունելով Մոսկվայի հայկական կոմիտեի առաջարկությունը, Բրյուսովն առաջ քաշեց միայն մեկ պարտադիր պայման. «Ինձ հնարավորություն տրվի ծանոթանալ հայոց լեզվին և ուսումնասիրել, թեկուզ և ընդհանուր գծերով, ինչպես հայ ժողովրդի պատմությունը, այնպես էլ նրա գրականության պատմությունը: Իրանից հետո կոմիտեի ներկայացուցիչներից մեկը (Պողոս Մակինցյանը—Դ. Խ.), սիրալիրությամբ իր վրա վերցրեց իմ ուսուցիչը: Իմ պրոֆեսորը դառնալու պարտականությունները, սկսեց ինձ դասավանդել լեզու և դասախոսել հայ գրականության պատմության դասընթացը»²: Եվ արդեն օգոստոսի կեսին Կ. Ի. Չուկովսկուն ուղղած նամակում Բրյուսովը հայտնում էր. «Այժմ ես խմբագրում եմ «Հայաստանի պոեզիան» ժողովածուն... Ես ինքս դրա համար ուսումնասիրեցի հայերեն լեզուն (ամբողջ ամառ սովորում էի «պրոֆեսորի» մոտ)»³:

Թե ինչպիսի եռանդով է ուսումնասիրել Բրյուսովը հայերենը, պատմում է բանաստեղծի կինը: «Դասախոսությունները սկսվեցին,—գրում է Ի. Մ. Բրյուսովան,—և շարունակվեցին, ոչ մեծ ընդհատումով, մոտ երեք ամիս... Մակինցյանը հետաքրքիր, բայց պահանջկոտ ու համառ ուսուցիչ էր: Դասերը տեղի էին ունենում շաբաթ անպայման մի քանի անգամ: Պարապմունքների համար ընտրված էր շատ սեղմ, խելացի և, եթե կարելի է այսպես ասել, խտացրած ձևը, այնպես որ՝ առաջին, նախնական պատկերացումը լեզվի մասին վա երի Յակովևիչը պտացավ շատ շուտ: Դասերին հաճախ մասնակցում էի և ես: Վալերի Յակովևիչը և ես սովորեցինք կարդալ ու գրել հայերեն»⁴: Ի. Մ. Բրյուսովայի այս վկայությունը հաստատվում է բանաստեղծի տրիսիվում

² „Поэзия Армении“, М., 1916, էջ 4:

³ Корней Чуковский, Из воспоминаний, М., 1958, էջ 361:

⁴ Иоанна Брюсова, Из воспоминаний, «Литературная Армения», 1959, № 5, էջ 101:

պահպանված երկու տետրակներով, որտեղ Բրյուսովների և նրանց ուսուցչի ձեռքով գրված են հայոց լեզվի քերականությանը վերաբերող հիմնական տեղեկությունները և համապատասխան վարժությունները, իսկ գրական ընթերցման համար նյութը գերազանցապես կազմված է քրեստոմատիկ բնույթի ստեղծագործություններից և այն բանաստեղծություններից, որոնք Բրյուսովը պետք է թարգմաներ: Բրյուսովի պարապմունքները նպատակասլաց էին, նրանք սերտ կապ ունեին թարգմանչի և «Հայաստանի պոեզիայի» խմբագրի գործնական խնդիրների հետ:

Հասկանալի է, որ ընդամենը երեք ամսում անհնարին էր հայոց լեզվին տիրապետել այնքան, որ առանց բառացի թարգմանության, ինքնուրույն կերպով կարելի լիներ թարգմանել հայկական պոեզիան, մանավանդ հնադարյանը և միջնադարյանը: Բայց Բրյուսովն իր առջև այդպիսի նպատակ չէր էլ դրել: Նրա համար կարևոր էր ծանոթանալ լեզվին, գաղափար կազմել նրա մասին, սովորել կարդալ ու գրել հայերեն, որպեսզի կարողանար վերադառնալ և լսել հայերեն լեզուն, նրա հնչույթը, որսալ նրա իմաստը: Բսկ հայերենին ոչ լրիվ տիրապետելը, որը խանգարում էր խորամուխ լինել թարգմանվող ստեղծագործությունների բովանդակության և ոգու մեջ, Բրյուսովը զգալի շահով փոխհատուցում էր հեղինակի ողջ ստեղծագործության և ժողովրդի ու գրականության պատմության մանրամասն տեսական ուսումնասիրությամբ: Իմանալով շատ լեզուներ, նա կես տարվա ընթացքում հայոց պատմության ու գրականության վերաբերյալ կարդաց բազմաթիվ գրքեր: Կատարվեց լուրջ հետազոտական աշխատանք, որի հետևանքով Բրյուսովն ստեղծեց «Հայաստանի պոեզիան և նրա միասնությունը դարերի ընթացքում» ընդարձակ ու խորապես բովանդակալից պատմագրական ակնարկը և «Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրությունը» հետաքրքիր գիտական աշխատությունը:

Որքան խորն էր ուսումնասիրում Բրյուսովը Հայաստանի պոեզիան, այնքան ավելի էր նրա առջև բացվում գեղեցկի հմայիչ աշխարհը, որտեղ «շողշողում ու փայլում էին իսկական գեղարվեստական ստեղծագործության վսեմ կերտվածքներ»: Եվ խմբագրական ու թարգմանական աշխատանքը, Բրյուսովի խոստովանությամբ, վերածվեց իր համար մի «նվիրական ու խիստ սիրելի գործի»: «Ուսումնասիրելով Հայաստանի պոեզիան,—գրում է Բրյուսովը անխուզ՝ հիշողության նախաբանում,—ես շատ անգամ զարմանքով կանգ եմ առել նախ և առաջ նրա առաջին ստեղծագործությունների բացառիկ կատարելության առջև»⁵: Եվ նա հիացական բնութագրություն է տալիս հայկական պոեզիայի զանազան փուլերի զարգացմանը: «Հայկական ժողովրդական պոեզիան,—դրում է Բրյուսովը,—պատկանում է բոլոր ինձ հայտնի պոեզիաներից ամենազարմանալիների թվին. քիչ ժողովուրդներ կարող են հպարտանալ, որ իրենց ժողովրդական երգերը հասնում են գեղարվեստական այդպիսի մակարդակի, այդպես նրբագեղորեն թովիչ են, այդպես ինքնատիպորեն ուրույն են, իրենց ողջ անմիջական պարզությամբ ու բնական անկեղծությամբ հանդերձ... Միջնադարյան հայկական քնարերգությունը մարդկային ոգու ամենահիանալի հաղթանակներից մեկն է, որպիսիք երբեք ճանաչել է համայն աշխարհի տարեգրությունը: Բոլորովին յուրակերպ մի պոեզիա, իր ձևերով մեղ համար նոր, խոր բովանդակությամբ, տեխնիկայի փայլուն վարպետությամբ. հայ-

⁵ «Поэзия Армении», 1916, էջ 7.

կական միջնադարյան պոեզիան, իր լավագույն օրինակներով, կարող է և պետք է շատ լաւ սովորեցնի ժամանակակից բանաստեղծներին... Վերջապէս, հայկական նոր պոեզիայում կան անուններ և մի շարք ստեղծագործութիւններ, որոնք ամենայն իրավամբ կարող են կանգնել արեւմտյան գրականության հարգելի անունների և հռչակված ստեղծագործութիւնների կողքին»⁶։

Այս րնդհանուր հիացական դնահատականները իրենց հիմնավորումն են գտնում Բրյուսովի պատմա-գրական ակնարկում, որտեղ տրվում է հնադարյան ժամանակներից սկսած մինչև XX դարի սկզբի հայկական պոեզիայի զարգացման ուղիների վերլուծությունը, ինչպէս արեւելահայ, այնպէս էլ արեւմտահայ պոեզիայի առավել նշանակալի երևույթների խոր և փայլուն բնութագրումը։ Բրյուսովի այս ակնարկի հատկանշական կողմն այն է, որ նա հայ պոեզիայի պատմությունը դիտում է ժողովրդի պատմության հետ անխզելի կապի մեջ։ Բրյուսովի կարծիքով հայկական պոեզիան միշտ արտահայտել է ժողովրդի պատմական կյանքը, նրա երազանքներն ու խոհերը, հույսերն ու ձգտումները, ուրախությունն ու վիշտը։ Սա վերաբերում է ոչ միայն հնադարյան ու միջնադարյան, այլև նոր ժամանակի բանաստեղծներին։ Բրյուսովը նշում է, որ նրանք՝ XIX դարի կեսերի բանաստեղծները «իւրավումն շունեին լինել միայն գեղարվեստագետներ. հայրենիքի վիճակը նրանց պարտավորեցնում էր նույն շափով էլ լինել հրապարակախոսներ... արթնացնել ժողովրդի ինքնագիտակցությունը, կյանքի կոչել և ոգեշնչել սերը հարազատ երկրի նկատմամբ, հնարավորին շափ բուժել ազդի բազմադարյան վերքերը, պայքարի համար ամրապնդել նրա ուժերը և զորավիգ լինել նրա հավատին՝ լավագույն ապագայի նկատմամբ»⁷։

Կանգ առնելով հայ բազմաթիվ բանաստեղծների գործունեության վրա, Բրյուսովը ջանում է գտնել նրանց առավել էական ու առանձնահատուկ գծերը, որոշել նրանցից յուրաքանչյուրի տեղն ու նշանակությունը պոեզիայի պատմության մեջ։ Ըստ որում, նա ոչ միայն բացահայտում էր այս կամ այն բանաստեղծի ստեղծագործության գաղափարական բովանդակությունը, հիմնական մոտիվները, այլև շատ դեպքերում բնութագրում բանաստեղծական արվեստը, գեղարվեստական վարպետությունը։ Այս առումով հատկապէս հետաքրքրական են ակնարկի այն էջերը, որոնք նվիրված են Սայաթ-Նովային, Ռ. Պատկանյանին, Հ. Հովհաննիսյանին, Հ. Թումանյանին, Ա. Իսահակյանին և մի քանի ուրիշ բանաստեղծներին։

Բրյուսովի պատմա-գրական ակնարկի շատ դրույթներ, հայկական պոեզիայի մի ամբողջ շարք երևույթների ու գործիչների մասին նրա խոր և ներթափացող գնահատականները նոր խոսք էին ասում ոչ միայն ուս, այլև հայ գրականագիտության մեջ և իրենց նշանակությունը չեն կորցրել մինչև այժմ։ Մենք ասում ենք «շատ դրույթներ», որովհետև նրա որոշ գնահատականներն ու տեսակետները այսօր արդեն հնացել են։

Սակայն Բրյուսովի գլխավոր վաստակը հայ ժողովրդի և նրա մշակույթի նկատմամբ ոչ այնքան այն է, որ նա որպէս գիտնական գրականագետ ճիշտ հասկացավ և բարձր գնահատական տվեց հայկական պոեզիայի լավագույն ստեղծագործութիւններին (չնայած դա էլ շատ կարեւոր է), այլ այն, որ նա,

⁶ Նույն տեղում։

⁷ Նույն տեղում, էջ 67։

որպես հիանալի թարգմանիչ, ցույց տվեց, որ այդ գործերն արժանի են բարձր գնահատականի: Հայկական պոեզիայի բրյուսովյան թարգմանությունների մեծ մասը մինչև այժմ էլ մնում է անգերադաճելի: Հավատարիմ մնալով թարգմանական իր հիմնական սկզբունքին (թե՛ բովանդակության, թե՛ ձևի մեջ հարազատ լինել բնագրին), Բրյուսովը միշտ ձգտում էր թարգմանվող բանաստեղծին վերարտադրել անհատական տարբերիչ գծերով, նրա ամբողջ ազգային առանձնահատկությամբ, իհարկե ոչուսաց լեզվի օրինքների և ոգու սահմաններում: Եվ մեծ մասամբ Բրյուսովը հասնում էր դրան: Նա կարողացավ ընթերցողին հաղորդել հայ ժողովրդական երգերի անկրկնելի հրապույրը, նրա թարգմանությամբ առաջին անգամ ռուսերեն լեզվով ամբողջ ձայնով հնչեցին այնպիսի հրաշալի քնարերգուներ, ինչպիսիք են Նահապետ Բուչակը և Սայաթ-Նովան, նա ռուս ընթերցող հասարակության սեփականություն դարձրեց Հովհաննես Հովհաննիսյանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի և շատ ուրիշ ականավոր բանաստեղծների բազմաթիվ չքնաղ ստեղծագործությունները: Բրյուսովը թարգմանել է մի ամբողջ հազարամյակի հայ բանաստեղծների ավելի քան հարյուր յոթանասուն ստեղծագործություն՝ սկսած Գրիգոր Նարեկացուց մինչև Զարենց: Նրա բազմաքանակ թարգմանությունների մեջ հանդիպում են նաև այնպիսիները, որ մեզ ամբողջովին բավարարել չեն կարող: Կան և առանձին սխալներ, անճշտություններ, անհաջող օրինակներ: Բայց այդտեղ ոչ մի զարմանալի բան չկա, եթե հաշվի առնվի, որ «Հայաստանի պոեզիան» սովորաբար անթուղիքի, որտեղ զետեղված է Բրյուսովի թարգմանությունների մեծ մասը, կազմվում էր շտապողականության պայմաններում: Բրյուսովը ինքը ևս լավ հասկանում ու տեսնում էր անթուղիքային թերությունները: Հայ ականավոր բանաստեղծ Հ. Հովհաննիսյանին ուղղված իր նամակում, 1916 թ. նոյեմբերին, արդեն անթուղիքի լույս տեսնելուց հետո, նա գրում էր. «Շնորհակալ եմ մեր «Հայաստանի պոեզիան» ժողովածուի մասին ջերմ խոսքերի համար: Շատ բան այնտեղ այնքան լավ չէ, որքան որ կկամենայինք, շատ բան էլ բացակայում է որոշ բաներ էլ ճիշտ չեն, բայց մարդկային ուժերը սահմանափակ են: Մաքուր խղճով կարող եմ ասել, որ արել եմ ուժերիս ներածին շափ: Կաշխատեմ հետազայում անել ավելի լավ և ավելի արժանի Զեր հիանալի հայրենիքին, որի հետ իմ կապերը ավելի պերտ են դառնում»⁸:

Եվ սրանք լոկ խոսքեր ու խոստումներ չէին: Բրյուսովը, իսկապես ավելի ու ավելի էր մոտենում Հայաստանին, նրա պատմությանն ու մշակույթին: Նույն 1916 թ. նա գրեց, իսկ 1918 թ. հրատարակեց «Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրությունը», որտեղ տարի առ տարի, դար առ դար շարադրել է հայ ժողովրդի բազմադարյան պատմության, արտաքին քաղաքական երևույթների ու փաստերի ընթացքը, հաճախ նոր կերպով լուսաբանելով ու գնահատելով դրանք: Պատմական դեպքերի վերլուծումը Բրյուսովին հանգեցրեց այն ճիշտ մտքին, որ հայ ժողովրդի բախտը անխղիճորեն կապված է ռուս ժողովրդի բախտի հետ: «Տարեգրության» մեջ Բրյուսովը մեծ ուշադրություն է դարձնում հայ ժողովրդի հոգևոր մշակույթի հարցին, ընդգծելով նրա հարըստությունն ու յուրօրինակությունը: Չնայած «Տարեգրության» որոշ մասերում

⁸ Վալերի Բրյուսովի արխիվից, հրապարակում Գ. Ա. Թաթոսյանի. տե՛ս ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1959, № 5, էջ 87:

զգացվում է իդեալիստական պատմագրության ազդեցությունը, այնուամենայնիվ, այն իր ժամանակ օգտակար գիտա-մասնայական ձեռնարկ հանդիսացավ բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում էին հայ ժողովրդի պատմությամբ:

Անհրաժեշտ է կանգ առնել նաև մի վաստաթղթի վրա, որը վկայում է Բրյուսովի կողմից Հայաստանի, նրա պատմության ու մշակույթի հանդեպ ցուցաբերած բացառիկ ուշադրության ու հետաքրքրության մասին, նրա ասահմանորեն անկեղծ ու ազնիվ ձգտումների մասին՝ որքան կարելի է խոր և հանգամանորեն ծանոթացնել ուս հասարակությանը՝ հայ ժողովրդի մշակույթին: Այդ փաստաթուղթը, որ մենք մի քանի տարի առաջ հայտնաբերեցինք Բրյուսովի արխիվում, դեռևս հարկ եղած ուշադրության չի արժանացել հայկական մշակույթի հետ ուս բանաստեղծի ունեցած կապերին նվիրված գրականության մեջ: Խոսքը վերաբերում է «Նոթեր «Հայաստան» ժողովածուի հրատարակման մասին» վերնագիրը կրող փաստաթղթին, որը գրված է 1917 թ. փետրվարի 15-ին և հասցեագրված է Մոսկվայի հայկական կոմիտեին: «Հայաստանի պոեզիայի» լույս ընծայումից հետո Բրյուսովը մտադիր էր հրատարակության պատրաստել արձակ ստեղծագործությունների նոր ժողովածու: Ըստ Բրյուսովի մտահղացման՝ դա չպետք է լիներ արձակի սովորական ժողովածու՝ զուգահեռ Հայաստանի պոեզիայի ժողովածուին, այլ մի բոլորովին նոր նախագծով պատրաստված գիրք: «Ինչպես հայտնի է,—գրում է Բրյուսովը,—գեղարվեստական արձակը, առ բառի այժմյան առումով, այսինքն վեպի, վիպակի, պատմվածքի ձևով, քիչ է զարգացել հայ գրականության անցյալ շրջաններում: Այսպիսով, «արձակի» ժողովածուն, ըստ անհրաժեշտության, կսահմանափակվեր միայն գրականության նոր շրջանով... Ցանկալի է հրատարակել արձակ ստեղծագործությունների ոչ թե մի զուգահեռ հատոր, այլ մի բոլորովին նոր նախագծով կազմված գիրք, որը ուս հասարակայնությանը ծանոթացներ հայ ժողովրդի կուլտուրական կյանքի հետ ամբողջությամբ վերցված, հնադարյան ժամանակներից մինչև մեր օրերը»⁹:

Եվ Բրյուսովը, իրեն հատուկ բարեխղճությամբ ու ջանասիրությամբ, շարադրում է ենթադրվող ժողովածուի նախագիծն ու ստեղծագործությունների ընտրման սկզբունքները: Ժողովածուի համար ընտրվող արձակ ստեղծագործությունների հատվածները պետք է լինեին բնորոշ իրենց դարաշրջանի համար և բարձրորակ՝ իրենց կատարողակաճ արվեստով, այսինքն հետաքրքիր ու գրավիչ: «Որպես ամենափայլուն օրինակ այն բանի, թե ես ինչպիսի հատվածներ նկատի ունեմ,—գրում է Բրյուսովը,—կմատնանշեմ Եղիշեի պատմության մեջ այն հայտնի տեղը, որտեղ նա խոսում է հայ կանանց մասին: Այդ հատվածը հիանալի կերպով ծանոթացնում է իր ժամանակի կենցաղի հետ. ընթերցողը կարծես թե տոգորվում է այդ դարաշրջանի մթնոլորտով. դրա հետ մեկտեղ ընթերցողի հիշողության մեջ անջնջելիորեն մխրճվում են և այն դեպքերը, որոնց մասին խոսում է Եղիշեն, քանի որ չի կարելի մոռանալ պատմաբանի կողմից այնքան դեղարվեստորեն պատկերված տեսարանները: Ով կարդացել է Եղիշեի պատմության այդ տեղը՝ գիտե հայ կյանքի մեկ դարաշրջանի և ամբողջ հայ ժողովրդի մասին ավելին, քան կարելի է իմանալ այդ նույն

⁹ Նույն տեղում, էջ 88.

հարցին վերաբերող տասնյակ ժամանակակից գիտական հետազոտությունների ուսումնասիրությունից...»¹⁰։

Այնուհետև Բրյուսովը բերում է բոլոր դարաշրջանների հայ հնդինականների ստեղծագործություններից բնութագրող հատվածների ընդարձակ ցուցակը, ինչպես նաև գրական այլ նյութեր, որոնք կարող էին մտնել ենթադրվող ժողովածուի մեջ։ Կարդալով այդ ցուցակը, չի կարելի չզարմանալ հայոց պատմության ու գրականության մասին Բրյուսովի ունեցած բազմակողմանի գիտելիքների վրա։ Այստեղ մենք հանդիպում ենք Մովսես Խորենացու, Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոսի, Ղազար Փարպեցու, Սերևոսի, Եղնիկի, Ղևոնդի, Թովմա Արծրունու, Գրիգոր Մագիստրոսի, Մխիթար Այրիվանեցու և շատ ուրիշ պատմիչների ու գրողների անուններին։

«Նոթերից» երևում է, որ Բրյուսովը հետաքրքրվել է նաև հայկական կերպարվեստով և ծանոթ է եղել հայկական զեղանկարչության, քանդակագործության, ճարտարապետության կոթողներին։ Այսպես, խոսելով այն մասին, որ ժողովածուն անպայման պետք է նկարագրողվի, նա որպես նկարներ առաջարկում է «հնադարյան մանրանկարչության, քանդակագործական ստեղծագործությունների, հին եկեղեցիների զարդանկարների, ուշ շրջանի որմնանկարների (էջմիածնում և այլ), ինչպես նաև զանազան պատմական առարկաների (Անիի թանգարանից և այլն) վերարտադրությունը, վերջապես, պատմական վայրերի տեսարանները... նկարագրողման համար կարող են ծառայել նաև պատմական զեպրեր կամ կարևոր վայրեր պատկերող հանրահայտ նկարների ընդօրինակությունները...»¹¹։

Բրյուսովն իրավացիորեն գտնում էր, որ նման ժողովածուի խմբագիրը ինչ-որ չափով պետք է գիտենա գրաբար, քանի որ նրա կողմից նշված հնդինականների մեծ մասը գրել է գրաբար։ Եվ Բրյուսովը գրաբար սովորելու պատրաստակամություն ու ցանկություն է հայտնում։ «Ես սիրով հաճն կառնեմ,— գրում է նա,— այդ ժողովածուի խմբագրությունը, որը կարելի է «Հայաստան» անվանել (ենթադրաբար)։ Այդ զեպրում ես իմ պարտքը կհամարեի ձեռնարկել գրաբարի ուսումնասիրությանը, որպեսզի հնարավորություն ունենամ վերահսկել թարգմանությունները։ Իհարկե, ես հույս չունեմ այդ լեզուն սովորել մանրամասնորեն, բայց կփորձում եմ, որ կտիրապետեմ այնքան, որպեսզի դուրսիցս ունեցող թարգմանության օգնությամբ հասկանամ տեքստը»¹²։

Մեզ մնում է միայն ավստոսալ, որ այդ չափազանց հետաքրքիր մտահղացումը՝ «Հայաստան» ժողովածուի հրատարակումը, Բրյուսովին չհաջողվեց իրականացնել։

Վայերի Բրյուսովը հայկական մշակույթը մասսայականացնելու համար օգտագործել է բազմազան ձևեր։ Դրանք ոչ միայն թարգմանություններն էին հայ գրողներից, Հայաստանին ու հայերին նվիրված սեփական բանաստեղծությունները, պատմագրական հոդվածները, այլև հայոց պատմության ու քնարերգության վերաբերյալ զեկուցումներն ու դասախոսությունները։ Այս թեմաներով Բրյուսովը հաճախ ելույթներ է ունեցել Մոսկվայում, Հատկապես

¹⁰ Նույն տեղում, էջ 89—90։

¹¹ Նույն տեղում, էջ 92։

¹² Նույն տեղում։

մեծ հաջողություն ունեցան նրա հրապարակային դասախոսությունները Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, էջմիածնում՝ 1916 թ. հունվարին:

Անդրկովկասում իր ուղևորության ժամանակ Բրյուսովն անձամբ ծանոթացավ հայ բազմաթիվ գրողների ու հասարակական գործիչների հետ: Հատկապես մեծ տպավորություն թողեցին նրա վրա Հ. Հովհաննիսյանի, Հ. Թումանյանի հետ ունեցած հանդիպումները: Բրյուսովի ու նրանց միջև հաստատվեցին բարեկամական մտերիմ հարաբերություններ: Այդ մասին համոզիչ կերպով վկայում են Բրյուսովի նամակները Թումանյանին և Բրյուսովի ու Հովհաննիսյանի նամակագրությունը:

Վ. Բրյուսովի գործունեությունը հայ մշակույթի լավագույն նվաճումների թարգմանության ու մասսայականացման գործում մի կատարյալ հասարակական սխրագործություն էր: Նա՝ զգալի ավանդ մուծեց ողու և հայ կուլտուրաների մերձեցման, մեր ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում: Ահա թե ինչու 1923 թ., Բրյուսովի 50-ամյակի օրը, նրան շնորհվեց Հայաստանի ժողովրդական բանաստեղծի կոչում: Ահա ինչու վալերի Բրյուսովի անունը հալ ժողովուրդը արտասանում է միշտ անկեղծ սիրով, խոր հարգանքով ու երախտագիտությամբ:

БОЛЬШОЙ ДРУГ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ

Г. А. ТАТОСЯН

(Р е з ю м е)

90-летие со дня рождения выдающегося русского поэта и ученого В. Я. Брюсова отмечается в Армении с особой теплотой. Армянский народ чествует Брюсова как одного из самых лучших своих друзей и вспоминает его имя с чувством глубочайшего уважения и сердечной признательности.

В статье освещается история большой и бескорыстной дружбы Брюсова с армянским народом и его культурой, показана огромная работа поэта по изучению армянской литературы и языка, дана характеристика деятельности Брюсова как историка и переводчика поэзии Армении с древнейших времен до начала XX в. Труды Брюсова «Поэзия Армении и ее единство на протяжении веков» и «Летопись исторических судеб армянского народа», несмотря на то, что некоторые их положения сегодня уже устарели,—явились ценным вкладом в армянское литературоведение и историографию.

Особое внимание в статье уделено «Записке об издании сборника «Айастан», несколько лет назад обнаруженной нами в архиве Брюсова и еще не получившей сколько-нибудь обстоятельного освещения. Этот документ, в котором содержится подробный план неосуществленного издания армянской прозы, еще раз свидетельствует об исключительном интересе Брюсова к Армении, ее истории и культуре, о его искренних и благородных стремлениях как можно шире и глубже ознакомить русское общество с культурой армянского народа.

Валерий Брюсов использовал самые разнообразные формы популяризации армянской культуры. Это были не только переводы из армянских авторов, собственные стихотворения, посвященные Армении и армянам, историко-литературные статьи, но и доклады и лекции об армянской истории и поэзии. С докладами на эти темы Брюсов неоднократно выступал в Москве. Особенно большим успехом пользовались его публичные лекции в Баку, Тифлисе, Ереване, Эчмиадзине, куда он приезжал в январе 1916 г.

Деятельность В. Брюсова по переводу и популяризации лучших достижений армянской культуры была настоящим общественным подвигом. Он внес значительный вклад в дело сближения русской и армянской культуры, укрепления дружбы наших народов. Вот почему в 1923 г. в день 50-летия Брюсова, ему первому было присвоено почетное звание народного поэта Армении.